Արցախը որպես տոպոլոգիական խնդիր

Ն. Լիգերոս

Հարկավ տեղին չէ խորնարհվել Արցախի ազատամարտիների հիշատակի առջև և դիտել այս հայկական տարածքը միայն որպես տոպոլոգիական խնդրի տեսանկյունից :

Այնուամենայնիվ, այս ուսումնասիրությունն անհրաժեշտ է թերևս միայն Արցախի դրոշի գտակցական սխեման հասկանալու համար : Քանի որ, եթե նույնիսկ աշխարհաքաղաքականությունը թվում է ինչ-որ չափով անմարդկային, քանզի այն տարանջատում է մարդկային աշխարհագրությունը, սակայն չի բացառվում, որ այն կարող է բացատրել այն, ինչ անցյալում անբացատրելի էր :

Արցախը միայն գրաված տարածք չէ, որն այժմ ազատագրված է. նախևառաջ այն մի սահման է: Ավելի ճիշտ կլինի այն դիտել որպես մի սահմանի լայնացում, որը դարձել է դինամիկ հարթություն այնիպիսի մի կոնտեքստում , ուր տոպոլոգիական տեսակետից տիրում է մաքրազատումը : Արցախի դիրքը օտար չէ Հայաստանի համար, սակայն միևնույն ժամանակ այն ունի իր յուրահատկությունը : Շփման տարածքի ակնհայտ բազմազանությունը հնարավորություն չի տալիս հեշտությամբ կազմել տարածաշրջանի քարտեզը :

Այստեղ ինկատի չունենք դիվանագետների գաղտնիությունը կամ մեր անտեղյակությունը Արցախը Հայաստանին միացնող միջանցքի իրական բնույթի վերաբերյալ : Մենք ուղակի ցանկանում ենք կարևորել այն փաստը, որ իրականությունն իրենից ներկայացնում է դիվանագիտական քարտեզներից հիմնավորապես տարբեր մի տոպոլոգիական խնդիր : Արցախը Ադրբեջանում գտնվող շրջափակված տարածք չէ : Արցախը ոչ էլ ակցանի մեջ է առնված այս երկրի և Նախիջևանի կողմից : Ընդհակառակը, ինչպես արդեն նկարագրել ենք մեր մեկ այլ ուսումնասիրության մեջ, Արցախն իրենից ներկայացնում է ռազմավարական կենտրոն :

Կովկասի ստրատեգիական տարածաշրջանում նրա դիրքը եզակի մաթեմատիկական կարևորություն ունի և կառուցվածքային տեսակետից հիմնաքարն է հանդիսանում : Արցախը Հայաստանի հետ կապ ապահովելու խնդիր չունի : Բայց այնուհանդերձ խնդիրը միայն պաշտոնական միջանցքով չի սահմանափակվում :

Ընդհակառակը, Արցախի ազատագրումը մասամբ լուծեց այս խնդիրը և դրա լուծումը իզոպերիմետրիկ բնույթ ունի, քանի որ այն նվազեցնում է սահմանի երկարությունը և դրանից ելնելով նաև հավանական ճակատը : Այսպիսով, ելնելով տարբեր պատճառներից, ժամանակն է շեշտը դնել Արցախի հավաքականության վրա : Արցախն այլևս թուրքերի Ղարաբաղը չէ և ոչ էլ սովետական կարգերի Լեռնային Ղարաբաղը : Վերագտնելով իր պատմական սահմանները՝ Արցախը վերագտավ նաև իր ստրատեգիական նշանակությունը :

Արցախն այլևս չի հենվում քաղաքական և դիվանագիտական հնարքների վրա : Նրա ազատամարտիկները կարողացան նորից վերադարձնել Արցախի ազգային, աշխարհագրական, մշակութային և պատմական բազմազանությունը : Այն, ինչը տասնամյակներ շարունակ չկարողացան իրականացնել օրինազանց և կեղծ պայմանագրերը, Արցախի ազատամարտիկները ձեռք բերեցին իրենց դիմադրելու ունակությամբ՝ զոհաբերելով իրենց կյանքը :

Պրոպագանդայի և թերիմացության պատճառով սակայն, մենք դեռևս չենք գիտակցում, որ Արցախի ազատամարտիկները մեզ տվեցին ոչ միայն տարածք, այլ կոնցեպտուալ տեսակետից նրանք լուծեցին մի ավելի կարևոր խնդիր՝ ստեղծելով տարածաշրջանի նոր տոպոլոգիա, որը ենթարկվում է ռազմավարական չափանիշներին :

Արցախը վերագտավ ոչ միայն իր նշանները : Նոր դիրքը ամրացրեց նրա բնույթը ՝ դարձնելով նրան Հայաստանի ռազմավարական համախոհ : Այս տոպոլոգիական միացման շնորհիվ Արցախի ներկայիս դրոշը միայն միջնորդի դեր չի ստանձնում, նրա նպատակն այսուհետև մեզ հայտնի է :